



## ՇԱՐԺԱԽԱՂԵՐ

### ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՊԱՂՈՒՄՈՎ ԵՎ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

#### ԳՆԴԱԿԻ ԳԼՈՐՈՒՄ

**Խաղի նպատակը՝** զարգացնել գնդակը գլորելու և բռնելու շարժողական հմտությունները:

**Ընթացքը՝** բոլոր երեխաները նստում են շրջանաձև՝ ոտքերը լայն բացած:

Մասնագետը՝ խաղավարը, գնդակը ձեռքին, կանգնում է շրջանագծի մեջտեղում:

Նշելով խաղացողներից մեկի անունը՝ նա գնդակը գլորում է դեպի խաղացողը և անմիջապես սկսում է ծափ տալ: Երեխան, որսալով գնդակը, հետ է գլորում այն՝ առաջնորդվելով մասնագետի ծափի ձայնով: Այսպիսով, խաղավարը հերթով գնդակը գլորում է խաղի բոլոր մասնակիցներին:

#### Խաղի կանոնները՝

1. Գնդակը կարելի է միայն գլորել:
2. Խաղը պետք է ընթանա լռության մեջ. խաղի ընթացքում չի կարելի խոսել ընկերների հետ:
3. Մասնագետի և երեխաների հեռավորությունը պետք է լինի 2-3 մետր:

## ԹՈՉՈՂ ԳՈՐԳ

**Խաղի նպատակը՝** զարգացնել կոորդինացված շարժումները, կողմնորոշումը տարածության մեջ:

**Ընթացքը՝** Երեխաները բաժանվում են երկու թիմի և կանգնում գորգերից 20 մ հեռավորության վրա: Մասնագետի ազդանշանով թիմի խաղացողները վազում են դեպի գորգերը՝ փորձելով կանգնել դրանց վրա:

30-40 վայրկյան հետո տրվում է երկրորդ ազդանշանը, և այդ պահին թիմերի խաղացողները պետք է կանգ առնեն:

Թոչող գորգի վրա կանգնած ամենաշատ խաղացող ունեցող թիմը հաղթող է ճանաչվում:

### Խաղի կանոնները՝

1. Մինչև խաղի մեկնարկը թիմերը պետք է ծանոթանան թոչող գորգի գտնվելու վայրին:
2. Խաղը սկսվում է մասնագետի ազդանշանով:
3. Խաղացողները պետք է անմիջապես կանգ առնեն երկրորդ ազդանշանի ժամանակ, անկախ նրանից, թե որ հատվածում են գտնվում իրենք: